# ԷՋՄԻԱԾԻՆ

Հայոց երկնքի արփվույն պես պայծառ
Մեր հոգվոց մեջը կը շողաս լռին,
Եվ կը փարատես մեր մտաց խավար,
Ո՛վ դու լուսաւոր մերն Էջմիածին։

Ձերթ ակունքն Հայոց ջինջ ու մաքրագույն
Ջու ազդեցութիւնք մեր մեջ կը հոսին
Սրբելով մեր մեղք ըզդացմունք տմոյն,
Կենդանի աղբյուր, վե՛հ Էջմիածին։

Սառնամանիք բիրտ, մրրրիկ քայքայիչ
Եկեր անցեր են վրա քու խաչին,
Բայց ժայռում անսասան կեցեր ես կրկին,
Ո՛վ հավերժական մեծ Էջմիածին։

Հայոց ծաղկանց պես կը ծլիս ամեն
Մեջը դարերուն եւ ձմրան ցրտին,
Նոր թույր կըզգենուս, նոր բույր խնկեղեն,
Գեղաբողբոջ դո՛ւ կյանք Էջմիածին։

Անժամանակ կոթողն Հայոցս Արարատ,
Ոչ մեկ հեղեղ իսկ հասեր գագաթին,
Բարբարիկ ազգեր—քանդիչ հեղեղատ—
Չըկրցին շարժել հիմդ, Էջմիածի՛ն։

Լերանց պես Հայոց կանգնիս երկնաբարձ,
Մեզ կուտաս ընդմիշտ ներշնչման ոգին.
Սանդուխ և կըլլաս երկնասլաց,
Կը տանիս մեզ վեր, բա՛ռձր Էջմիածին։

Զայնասփյուռ մի ես անվերջ հեռարձակ,
Երգ մը ունիս մեզի դաշն ու սրտագին,
Կը խոսիս մեզի ամեն ժամանակ
Թե բանանք մեր սիրտ, սէ՛ր Էջմիածին։

Համայն Հայության լույս—կրակարան,
Կայծ մը ունի քեզմե անձնյուր հայ հոգին,
Երկրի որ անկյունն են թափառական
Քեզմով կը տաքնան, բո՛ց Էջմիածին։

Տաճար հոյակապ, տեղի սրբազան,
Ուր իջավ ինքը Փրկիչն աշխարհին,
Տրվավ Հայոցըս պարծանք մը անընման,
Անմահ անուն մը՝ Սուրբ Էջմիածին։

Ամերիկա

ՀՈՎՀԱՆ ՀԱՅԿԱԶ